անպատճառ. և զպահելոյ խաղողն յայս ամիսս քաղէ և կախէ. և զպահելոյ թուզն յայս ամիսս չորացո։ Եւ ուր աշունն որ ձիթենի կամենաս տնկել, նա դու զփոսն ծառին 'ի յայս ամիսս արա և բաց, նոյնպէս և զայլ աշընտունկ ծառանցն. և 'ի բաց թող զփոսերն որ արքն այրէ և շինէ, որ երբ տնկես՝ արքիացնէ զտունկն։ Նոյնպէս և զգինոյ համար կարատնին՝ յայս ամիսս արևէ, անօսէ և ձիւթէ՝ նոր գինոյն համար։

Ի ՎԱՍՏԱԿՈՑ ԳՐՈՑ

ՏԵՍԱՐԱՆ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՅԵՂԻ

ՈՎԿԻԱՆԻԱ

Նոր Զեղանտա ըսուած աշխարհը՝ մասն է Բոլինեզիայի որ Արևելեան Ովկիանիա ալ կ'ըսուի, և երեք կղզիներէ ձեւացած է, որոնց երկուքը մեծ են և իրարմէ Գուք նեղուցով բաժնըւած, և երրորդը պզտիկ՝ որ Ֆոքոյ նեղուցով կը բաժնուի։ Կլիման ցուրտ է. երկիրը՝ նոր տեսակ բոյսերով՝ կենդանիներով և թռչուններով զարդարուած է. բնակիչքը՝ բարձրահասակ և կորիճ մարդիկ են, մորթերնին սեւագոյն. բնութեամբ՝ վրէժխնդիր. յանկարծ յանկարծ կը յարձրկին Եւրոպացւոց վրայ՝ որոնց հետ անհաշտ թշնամութիւն ունին, կը սպաննեն անխնայ՝ և մարմիններն ալ կ'ուտեն։ Ընդհանրապէս բազմակին են. զգեստ հագնելու սովորութիւն չունին, միայն կապերտի կտոր մը կը ձգեն մէջքերնէն վար. դէմքերնին՝ գոյներով կը ներկեն, ապարանջաններով և մանեակներով կը զարդարուին։ Հիւղերու մէջ կը բնակին՝ զորոնք ծառի կեղևներէ կը շինեն ցիցերով հաստատած։

Մինչին կղզւոյն բնակիչքն աւելի կըրթուածներն են, և 4,000 հոգի են. իսկ հիւսիսային կողմի կղզւոյն բնակիչքը գունդ գունդ կը բնակին՝ իրենց սեփական իշխաններ առաջնորդ ունենալով։ Կերակուրնին գետնախնձոր է, վայրի պտուղներ, արմատք, ձուկ. ինչուան վաթսուն ոտնաչափ երկայնութեամբ նաւակներ կը շինեն, առագաստ և թիւ գործածել գիտեն։ Պատերազմի զէնքերնին են նիզակ, տապար և լախտ, և ուրիշ զէնքերն ալ Եւրոպացւոցմէ կ'առնեն՝ իրենց երկրին բերքերուն հետ փոխանակելով։ Մէջերնին միշտ կռիւ է. մեռելնին կը թաղեն. անձնասպանութիւնը անտարբեր բան մը սեպուած է մէջերնին։

Հիւսիսային կողմի կղզւոյն մէջ կը կարծուի որ 400,000 բնակիչ գտնուի. 1815ին Մէրզտէն քարոզիչը հոն գաղթականութիւն մը հաստատելով՝ դըպրոց մըն ալ կանգնեց, ուր որ հիմա բազմութիւն աշակերտներ կը սորվին, և քրիստոնէութիւնը կը տարածուի այն հեթանոս բարբարոսներուն մէջ։

Արևելեան Ովկիանիայի կղզիներէն են Բարեկամաց կամ Դոնկա կղզիք ըսուածներն ալ, որ ընդ ամենը 150 հատէն աւելի են. հրաբուխներ ունին, և այն պատճառաւ ալ գետնաշարժն անպակաս է։ Բնակիչքը բարձրահասակք են, ուժով, մաղտ, մեծ աչքերով. բնաւորութիւننին կակուղ, կեղծաւոր, և գող։ Շատ կը գործածեն Գաթա ըսուած ըմպելիքը՝ զոր պղպեղի արմատէ կը հանեն, ձկնորսութեան և հողագործութեան մէջ ճարտար են. երիկ մարդիկ մերկ կը պտտին, իսկ կանայք մէջքերնէն վար լաթ մը կը ձգեն. մարմինները կը ներկեն ճերմակ կամ կարմիր

Զինուոր Գոնակա Գաայուրի.

գոյներով։ Ցած խրճիթներու մէջ կը բնակին, որոնց ներսը բաւական վայելուչ շտկուած է. բազմակնութիւնը մէջերնին արգիլուած չէ, տղաքը խնամքով կը մեծցնեն, ծերերը կը պատուեն, իրենց Թագաւորը Աստուծոյ պէս կը պաշտեն։ Իրարու որ հանդիպին՝ քթով դիմացինին քթին դպչե֊

Բնակիչ Մատիսսոն կղզոյ.

Իշխան ցեղի մը Նոր Զելանտայի.

լով՝ զիրար կը բարևեն. իրենց աստուածներուն՝ մարդ ալ կը զոհեն։

Այս կղզիներուն մէջ մեծագոյնը Դոնկագապու բսուածն սեպուի որ 13,000 բնակիչ ունի, և Սրբազան կը կոչուի։